ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2012թվականի N 41-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՊԾ-ի «Մնունդ Աշխատանքի Դիմաց» ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքների միության կողմից հաստատվել և ներկայացվել է ծրագիր , որի շրջանակներում պետք է կատարվի Դիլիջան քաղաքի Գայի փողոցի հենապատի վերանորոգման աշխատանքները: Դիլիջանի քաղաքային համայնքի ներդրումը նշված ծրագրին պետք է կազմի 4841800 դրամ՝ նյութերի տեսքով:

Համայնքի մասնակցությունը ծրագրին ապահովելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կատարել ծրագրով նշված շինարարական նյութերի գնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջան քաղաքի Գայի փողոցի հենապատի վերանորոգման աշխատանքներին համայնքի ներդրումն ապահովելու նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113_/ հատկացնել 4841800 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ